ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/25Ա

22/01/2021

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Յունիբանկ» ԲԲԸ-ն 2020 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 6,000,000,000 ՀՀ դրամ և 40,000,000 ԱՄՆ դոլար ծավալով արժեկտրոնային, անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ծրագրային ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն 2021 թվականի հունվարի 12-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել նաև ծրագրային ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2021 թվականի հունվարի 22-ի թիվ 3 արձանագրություն)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Գրանցել «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված՝ 6,000,000,000 ՀՀ դրամ և 40,000,000 ԱՄՆ դոլար ծավալով արժեկտրոնային, անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ